

# ՍԻՍԻԱՆ

## ԲՆԱԳՐՈՒԹԻՒՆ.

Սահմանները. — Հին սահմանները կազմում էին. Հիւսիսից Արցախի Տարայ գտառակը, արևմուտքից՝ Վալոց Չոր և ներքեռմ՝ Ճահուկ, հարաւից՝ Երնջակ և Արևիք, արևելքից՝ Բաղը, Հաբանդ և Աղահէճք \*):

Աժմեան սահմաններն են՝ Զուանշիրի, Շարուր-Դարալագեազի, Նախիջևանի գտառները, Ղափանի ու Զանգեզուրի սատիկանական մասերը և Լորաձորն ու Տաթեր:

Սիսիանը, իւր բնական կազմութեամբ, բաժանւում է երկու մասի. Հիւսիս-արևելեան, որ կազմում է նշանաւոր արօտատեղիներ (Եալլախ), և հարաւ-արևմտեան, որ գտառակ բնակաշատ մասն է:

Բուն Սիսիանը մեծ մասամբ գաշտավայր է, աեղ-տեղ, մանաւանդ սահմանագլխներում, կտրտուած ցածր լեռների շղթաներով, որոնք զուրկ են անտառներից:

Լեռներ. — Սիսիանի լեռներից, որոնք գլխաւորապէս բարձրանում են նրա սահմանագծերի վրա՝ նշանաւոր են՝ Հիւսիսում Միխտուքեան լեռնաշղթան (11851) և Դալի-գաղլի (11907). արևմուտքում՝ Գէալին-զայտ (11002), Ուշթափա, Թէավագէօգի, Ղըսըբ-զաղ (Կысыръ-дагъ), Կեսըլըլ (11,000), մեծ և փոքր Ախտաբան (10194 և 7777). Արիկլի (7144), Կազուչի-զաղ (8777), Սալվարտի (10422), Ղարա-թոփրազ (2527), Դալուլու-զաղ. Հարտում Արաժին,

\* ) Ալիշան, Ախուական. եր. 206.

(10425), Կետպին-դալա (9100), Դէամուրլի-դաղ (11023). արևելքում՝ Կիւպրու-սար (9377), Լոր, Ալշա-դաղ, Գելիդու լեռներ (8222 և 7189), Եկշ-թափա (7327), Եան-թափա (7591), Ուչթափալի լեռնաշղթան, Մեծ (11695) և փոքր Խլոլի, Քեչալ-դաղ (10648), Զան-դուրդարան (9219), Ղա-քան-կադըկ (7816) և Զիրակի (6999).

Ներքին լեռներից նշանաւոր են—Կեատիր-դաշ (10492), Լիւլտպար (10416), Պիրիչինկիլ (10572), Ղըզըլ-բողաս-դարի (11059), Ղըզըլ-բողասն-չալի (11872), Ղըզըլ-թափա, Ղըզըլ-թափա (7496), Զեչագէօլ (7924), Դաւա-բոլնի, Արիւկլու (7144), Ախճա (7155), Խարտի-իւզ (7792), Լաստ, Արփա-թափա (6421), Ղարա-դալա (6118), Քեչարերդ (8086), Ահմէտ-իւրտ (6818), Կետան-թափա (5962), Կիզիլճիզ (7252).

**ՀԾՆՇՐ.**—Սիսիանը չունի ոչ մի մեծ լիճ. եղած փոքրիկ չորս լճակներն ել գտնելում են հիւսիսալին. մասում, որ շատ սակաւ է բնակուած և գեղեցիկ արօտատեղիներ է ներկայ-ացնում։

Սրանցից ամենամեծը Ալա-գեօլն է, որ գտնելում է Պիրիչինկիլ լերան ստորոտում, սրանից փոքր ինչ հիւսիս՝ Ղարագեօլը, իսկ հարաւա՞ղապուլար փոքրիկ լճակը Ղըզըլ-բողաս-դարի լերան լանջին։

**ԳԵՄՈՒՇՐ.**—Սիսիանի միակ նշանաւոր գետն է Բարկու-շատը, որ զանազան տեղերում տարբեր անուններ է կրում։ Նա սկիզբն է առնում Զանգեզուր և Շարուր-Դարալագետաղ գտւառների սահմանագլխում ընկած լեռներից ու նրանց մօտ գտնուած փոքրիկ լճակներից ու Բազար-քենտ գիւղի մօտի բազմաթիւ աղբիւրներից։ Սկզբում, Բազար-չալ անու-նով հոսում է շարունակ գէպի հարաւարենք։ Որոտնալ վանքի մօտ ստանալով Որոտնայ-գետ անունը՝ անցնում է Մեծ Անապատի մօտի Սատանի կամուրջի տակից և ապա՝ ուղղուելով գէպի արևելահիւսիս՝ նոխս Հալիձորի և ապա Բարկուշատ անունով՝ հոսում է մինչև Կալա-Հասանլի գիւղը, ուր նորից ընթացքը գէպի հարաւարենք ուղղելով՝ նոյն անունով գնում է մինչև Կարալար գիւղը, որից փոքր ինչ

հարաւ խառնում է Հաքեարու հետ և Շարիֆանեան կողակների կայանի մօտ թափում Արաքսի մէջ:

Բարկուշատի վտակներն են.—աջ կողմից.

Արիւկլու-չալը, որ սկիզբն է առնում Արիւկլու լեռից,  
(7144 ստ.) և թափում է նրա մէջ Եաղատ գիւղի մօտ: —  
Արիւ-չալը, որ սկիզբն է առնում Արիւ-սարից, և անց-  
նելով Եխտար, Ախլաթեան, Տուլորս և Ուզ գիւղերը՝ թափ-  
ում է նրա մէջ վերջին գիւղիս մօտ: Սա նախապէս ընդու-  
նում է իւր մէջ Տուլորսի մօտ Սիսիան գետը, իւր վտակ  
Զակով և Ուզի մօտ՝ Դալի-չալը:

Զախ կողմից՝ Ախ-մէշտի չալը, Բուղուր չալը, և Մուխորթո-  
լեռն, որ սկիզբն են առնում Մուխորթուրեան լեռան լանջերից:

Հանիեր. — Սիսիանը հանքարանտկան տեսակէտից ուսում-  
նասիրուած չէ: Յալտնի, մշակուող հանքեր չկան, սակայն  
երկիրը հարուստ է հանքերով: Ալսպէս՝ Մազրա գիւղի արևե-  
լահարաւալին կողմում գտնուում է արծաթի հանք: Սրանից  
տասնեւհինգ տարի առաջ հանեցին այս հանքից և տարան  
զտերաւ Լծէն գիւղը, որովհետեւ Սիսիանում անտառներ չկան:  
Սակայն ծախսը շատ մեծ լինելով՝ օգտաւէտ չգտան շարու-  
նակերու և անմշակ թողին:

Նոյն գիւղի արևելեան կողմում էլ գտնուում է պղնձի  
հանք, որ նոյնպէս անմշակ է մնում:

Այս հանքերը ամենայն հեշտութեամբ կարելի կը լինի  
մշակել՝ եթէ նախապէս մշակեն արդտեղից հազիւ մի ժա-  
մուալ հեռաւորութեան վրայ գտնուող Նուշար գիւղի մօտի  
քարածուխի հանքը: Սա գտնուում է գիւղից հազիւ մի քիլոմետր  
հեռաւորութեան վրայ, Գէօլ-բռուլախի ձորում: Թուրքերից  
ընիկներն անգամ չեն օգտաւմ այս քարածուխից, մինչդեռ  
Բազմարչայի դուխորոները գալիս հանում և են ֆուրգոնները  
քարձած տանում իրենց գիւղը գործուծելու: Նոյն ձորա-  
կում, փոքր ինչ ցածր գտնուում է նաև պղնձի հանք, նոյն-  
պէս անմշակ և անյատ:

Պղնձի հանք գտնուում է նաև Ալիշար թրքաբնակ գիւ-  
ղում:

Լաւ, կրակի դիմացող կաւ գտնւում է Բազար-Հայ գիւղի մօտ:

Հանեսպին ջրեր. — Հանքալին ջրերով հարուստ է Սիսիանը, սակայն նրանցից ոչ մէկը գեռ հիմնովին ուսումնասիրուած չէ: Տեղացիները նրանց նշանակութիւնը չըհասկանալով՝ չեն օգտնում և բոլորովին անխնամ են թողել:

Առաւելապէս գտնւում են ածխաթթուալին ջրեր (յուլեկուսայ воды), որոնցից նշանաւոր են. —

1) Տուղորս գիւղինը, որ գտնւում է գիւղի հիւսիսալին կողմում, մօտ  $\frac{1}{2}$  քիլոմետր հեռաւորութեան վրայ, Ալրի-չալի ձախ ափին, մի փոքրիկ բլրակի տակ: Տեղացիները նրան կոչում են «Խարատակի շոռ ջուր» և, ինչպէս ասացի՝ բոլորովին չեն օգտնում:

2) Ախլաթեան գիւղինը: Առաջները սա բաւական լորդութեամբ բղինելիս է եղել միայն մի տեղից, սակայն 1896 թուին պատահած երկրաշարժից երկիրը ճեղքուել է և ջուրն էլ ցըռուել: Այժմ բոլորովին անխնամ է թողնուած:

3) Եկլար գիւղինը, որ բղխում է Ալրի չալի ձախ ափին:

4) Դաստակերտ գիւղինը, որ գտնւում է Ալրի չալի աշղոտակ՝ Կշիկանտի-չալի աջափին, գիւղից երկու քիլոմետր բարձրութաւ տաք, հանքալին ջրի մի աղբիւր Սիսիանի արևմտահիւսիսալին կողմում, Մուխորատոլեան լեռնից փոքրինչ հիւսիս, 9289 ոտն. բարձրութեան վրայ:

Կլիման. — Բուն Սիսիանը ծովի մակերեսոյթից բաւական բարձր գիրք ունենալով՝ ցուրտ կլիմայ ունի: Ջմեռը տեսում է ամբողջ վեց ամիս և բաւական խիստ է, ամբողջ երկիրը մեծ մասամբ պատած է լինում ձեան հաստ շերտերով: Առաւելապէս Եալինաւ (Քամոտ) սարերից սաստկութեամբ փշում են քամիներ և բուք բարձրացնում, այնպէս որ գիւղերի մէջ յարաքերութիւնը շատ անդամ ամբողջ շարժներով կտրւում է: Դարունն անցնում է շատ աննկտելի կերպով, իսկ ամառը ալնքան էլ զգալի չէ լինում: Փոքրինչ աւելի բարձրացիր տեղերում, ինչպէս են Մազրա, Ալելու և ալլն, հացաբոլսերը միայն օգոստոսին են հասնում:

Քազարքենտի կողմերում արտերը շատ անգամ վնասւում են վաղահաս ցրտերից, ուստի և բնակիչները, գլխաւորապէս մայականներ, այնքան էլ չեն զբաղւում երկրագործութեամբ, այլ առաւելապէս պարագում են անասնապահութեամբ։ Արդէն օգսատոսի սկզբին՝ ետլախներում այնքան զգալի է դառնում ցուրտը, որ բոլոր սարսարները վերադառնում են։

Օդը ընդհանրապէս խոնաւ է. գարնան սկզբում լոլ գանձրեներ են տեղում։ Ամառը չսրային է լինում և երբեմն նորն իսկ երաշտութիւն է պատահում։

Բուսականութիւնները։—Սիսիանը բուսականութեան կողմից շատ աղքատ է։ Բոլոր լեռները մերկ են և ոչ մի անտառ չկալ, այս պատճառով էլ բնակիչների միտք վառելանիւթը՝ քակորն է։ Պաղատու ծառեր ևս բոլորովին չկան։ Միակ ծառը, որ զարդարում է գիւղերի առուների և գետերի ափերը՝ ուռենին է։ Բոլոսերն էլ բազմազան չեն։ Գարին ու ցորենը այնքան ցածր են բուսնում, որ գիւղացիներն ստիպուած են մտնգաղով հնձելու, որ անհամեմատ դանդաղ և դժուար է կատարելում։ Ուստի խեղճ գեղջուհիներն էլ հարկադրում են մտնգաղ վերցնել և օգնել ամուսիններին։

Կննղանիները։—Սիսիանը հարուստ է բազմատեսակ ընտանի կենդանիներով, որոնց արածեցնելու համար ունի բազմաթիւ արօտատեղիներ, առաւելապէս Բազարքենդի կողմերում։ Ամենից աւելի պահում են օչխարներ, կովեր, եղներ, էշեր և ձիեր։ Դաշտերում պատահում են նապաստակներ, աղուէններ, գալլեր և այլն։ Ընտանի թռչուններից գլխաւորապէս պահում են հաւեր, իսկ սագ, բադ, հնդկահաւ և այլն շատ քիչ։